

“ՎՏԲ Հայաստան Բանկ” ՓԲԸ-ում MoneyGram համակարգով դրամական փոխանցումների

իրականացման հիմնական պայմաններ

1. Ընդհանուր պայմաններ

1.1. Բանկն իրականացնում է **MoneyGram** դրամական փոխանցման համակարգի միջոցով դրամական փոխանցման ուղարկում ԱՄՆ դոլարով, իսկ վճարում՝ ԱՄՆ դոլարով և Եվրոյով:

1.2. Բանկը փոխանցվող գումարի ընդունումը կատարում է փոխանցման արժույթով, ինչպես նաև ցանկության դեպքում այլ արժույթով՝ փոխարկումով:

1.3. **MoneyGram** դրամական փոխանցում ուղարկողը վճարում է փոխանցման միջնորդավճարը ՀՀ դրամով:

1.4. **MoneyGram** դրամական փոխանցումը ստացողից միջնորդավճար չի գանձվում:

1.5. **MoneyGram** դրամական փոխանցման ուղարկման կամ վճարման դիմաց Բանկը հաճախորդին է տրամադրում փոխանցման ստացումը կամ ուղարկումը հավաստող անդորրագիր:

1.6. **MoneyGram** դրամական փոխանցման ուղարկումից հետո դրամական փոխանցումը հասանելի է ընդամենը 10-15 րոպեի ընթացքում՝ կախված դրամական փոխանցման ուղղությունից: Առանձին երկրներ ուղարկվող դրամական փոխանցումների ժամկետները կախված են դրամական փոխանցման ուղղությունից:

1.7. **MoneyGram** դրամական փոխանցման միջնորդավճարի չափը կախված է դրամական փոխանցման ուղղությունից: ԱՊՀ երկրներ ուղարկվող դրամական փոխանցումների համար սակագինը սկսվում է 2 ԱՄՆ դոլարից՝ կախված դրամական փոխանցման գումարից: Այլ երկրներ ուղարկվող դրամական փոխանցումների համար սակագինը սկսվում է 12 ԱՄՆ դոլարից՝ կախված դրամական փոխանցման գումարից

2. Ուղարկված դրամական փոխանցման մեջ փոփոխությունների իրականացում

2.1. **MoneyGram** դրամական փոխանցման համակարգով ուղարկված փոխանցման տվյալների փոփոխությունն իրականացվում է դրամական փոխանցումն ուղարկողի գրավոր դիմումի հիման վրա:

2.2. Փոխանցման մեջ առկա սխալների ուղղումն իրականացվում է փոխանցող և ստացող բանկերի կողմից սահմանված ժամկետներում՝ 15 րոպեից սկսած ժամկետով:

2.3. Կատարված փոխանցման մեջ չեն կարող փոփոխություններ կատարվել, եթե գումարը վճարվել է դրամական փոխանցումը ստացողին և ստացողը հրաժարվում է փոխանցված գումարը վերադարձնելուց:

2.4. Բանկը չի գանձում լրացուցիչ վճարներ **MoneyGram** դրամական փոխանցման համակարգով ուղարկված դրամական փոխանցման մեջ փոփոխությունների իրականացման համար:

3. Ուղարկված դրամական փոխանցման չեղյալացում

3.1. **MoneyGram** դրամական փոխանցման համակարգով ուղարկված դրամական փոխանցման չեղյալացումն իրականացվում է դրամական փոխանցումն ուղարկողի գրավոր դիմումի հիման վրա:

3.2. **MoneyGram** դրամական փոխանցման համակարգով փոխանցման չեղյալացումն իրականացվում է դրամական փոխանցման ուղարկման միևնույն օրվա ընթացքում:

3.3. Կատարված փոխանցումները չեն կարող չեղյալ համարվել, եթե գումարը վճարվել է ստացողին և ստացողը հրաժարվում է փոխանցված գումարը վերադարձնելուց:

3.4. Բանկը չի գանձում լրացուցիչ վճարներ ուղարկված դրամական փոխանցումը չեղյալ համարելու համար:

4. Ուղարկված դրամական փոխանցման հետ վերադարձման ընթացակարգը

4.1. **MoneyGram** դրամական փոխանցման համակարգով ուղարկված դրամական փոխանցման հետ վերադարձն իրականացվում է դրամական փոխանցումն ուղարկողի գրավոր դիմումի հիման վրա:

4.2. Ուղարկված դրամական փոխանցման հետ վերադարձն իրականացվում է ստացող բանկի կողմից սահմանված ժամկետներում:

4.3. Կատարված փոխանցումները չեն կարող հետ վերադարձվել, եթե գումարը վճարվել է ստացողին և ստացողը հրաժարվում է փոխանցված գումարը հետ վերադարձնելուց:

4.4. **MoneyGram** դրամական փոխանցման համակարգով միևնույն օրը հետ վերադարձված դրամական փոխանցման դեպքում միջնորդավճարը հետ է վերադարձվում հաճախորդին: Հաջորդ օրը դրամական փոխանցումը հետ վերադարձնելու դեպքում միջնորդավճարի հետ չի վերադարձվում հաճախորդին:

4.5. Բանկը չի գանձում լրացուցիչ վճարներ ուղարկված դրամական փոխանցումը հետ վերադարձնելու համար:

4.6. Դրամական փոխանցումը ստացողի չհայտնաբերվելու դեպքում փոխանցված դրամական միջոցները կարող են մնալ համակարգում **MoneyGram** համակարգի կողմից սահմանված ժամկետներում: Տվյալ դրամական միջոցների հետ վերադարձն իրականացվում է դրամական փոխանցումն ուղարկողի գրավոր դիմումի հիման վրա տվյալ համակարգի կողմից սահմանված ժամկետներում: